ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/74

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով Դավիթ Աշոտի Ազատյանի կողմից 02.07.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/74 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. Դավիթ Ազատյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

Դավիթ Աշոտի Ազատյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) 02.07.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար կառուսելների ձեռքբերման նպատակով 13.06.2018թ. հայտարարվել է «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Հայտերի բացման օր է սահմանվել 20.06.2018թ.:

«ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի շրջանակներում հայտ է ներկայացրել, այնուհետև առաջին տեղ զբաղեցրած և հաղթող մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը (այսուհետ՝ Մասնակից): Սակայն Մասնակցի կողմից որպես հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը պատշաճ ձևով չի ներկայացվել նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր:

Բողոքաբերը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է մերժվեր Մասնակցի հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված պայմանագիրը չի համարվում նմանատիպ Ընթացակարգի շրջանակներում:

Բողոքաբերը գտնում է, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, որի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Դավիթ Աշոտի Ազատյանը բողոքով խնդրել է չեղյալ համարել Արտյոմ Սարգսյան Կարենի Ա/Ձ-ին հաղթող ճանաչելու մասին 28.06.2018թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը:

Դավիթ Աշոտի Ազատյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կողմից առաջին անգամ է կազմակերպվում նման գնման ընթացակարգ և բավարար

տեղեկացված չեն եղել, և քանի որ ընթացակարգին հայտ էր ներկայացրել միայն Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը, ուստի վերջինիս գնահատող հանձնաժողովը համարել է հաղթող և չի գնահատել մնացած չափանիշները, այդ թվում նաև՝ որակավորման փաստաթղթեր չի պահանջել:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կողմից «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար կառուսելների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Դավիթ Աշոտի Ազատյանի 02.07.2018թ. բողոքը, «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, «Կապանի Վ. Սարգսյանի

անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի դիրքորոշումը, գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի կետի 1-ին, 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման

արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3)...

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կողմից «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար կառուսելների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետով նախատեսվել է, որ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

բ) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը·

գ) իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ՝ համաձայն հավելված N 6.2-ի: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար մասնակիցը ներկայացնում է նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

դ) իր կողմից հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին՝ համաձայն հավելված N 6.3-ի: Նշված տեղեկանքին կցվում են նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 2-րդ կետով որոշվել է Մասնակցից պահանջել 3 աշխատանքային օրյա ժամկետում ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, իսկ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում մերժել Մասնակցի հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.06.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացությունը և հանձնաժողովի գնահատման արդյունքները Ա/Ձ Արտյոմ Սարգսյանը ճանաչվել է ընտրված մասնակից, որին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

Ասյպիսով ուսումնասիրելով գործում առկա «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև ԳԲԽ-ԱՄ-2018/74 բողոքի քննության շրջանակներում հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի հայտնած դիրքորոշումը, արձանագրում եմ, որ «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը և Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ Արտյոմ Սարգսյանից չի պահանջել ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, դրանով իսկ խախտելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Դրա հետ մեկտեղ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անհրաժեշտ է համարում արձանագրել այն փաստը, որ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 2-րդ կետի 2.5 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սննդամթերքի մատակարարված լինելը: Մինչդեռ Կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է «Կապանի Վ. Սարգսյանի անվան մանկական զբոսայգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար կառուսելների ձեռքբերման նպատակով, ուստի սննդամթերքի մատակարարված լինելը սույն ընթացակարգի շրջանակներում չի կարող դիտարկվել որպես համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեություն:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Դավիթ Ազատյանի 02.07.2018թ. բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Դավիթ Աշոտի Ազատյանի կողմից 02.07.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՍՄԿՔ-ՎՍԱՄՁ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 28.06.2018թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված Ա/Ձ Արտյոմ Սարգսյանին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ